




ՎԵՀԱՓԱՌԻ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԻՑ

Հայ ձեռագիրը ամենէն վնիտ հայելին է հայ հոգեկանութեան: Հայու պատմութեան տաքն ու պաղը, սեւն ու ճերմակը, փառքն ու անքակը իր մէջ խառնած հնամենի բայց միշտ նոր, մագաղաթեայ անշարժութեամբ բայց հաղորդական եւ յուզական ջերմութեամբ բարբառող վկայ է հայ ձեռագիրը: Հայ կեանքի ամենէն նորը, մտերմօրէն բաբախուն ապրումները, որոնք առհասարակ դուրս կ'իյնան «հանգամանաւոր» պատմիչներու, «պաշտօնական» մատենագիրներու լայնարձակ կարկիւններէն, այնպիսի տաքութեամբ մը կը խօսին հայ ձեռագրի էջերուն խոնացեալ անկիւններէն, որ անկարելի է չբռնուիլ անոնց հոգեխողով քաղցրութենէն, սրտայոյզ անկեղծութենէն ու յանկարծարուիս պարզութենէն:

* * *

Քանի հայը միտոնն ունի իր ճակատին, միտոնին փայլը լոյս պիտի դառնայ իր քայլերուն առջեւ եւ օտարութեան փոշին կեղտ պիտի չկապէ այդ ճակատին, իր ճանապարհը ուղիղ պիտի ըլլայ, իր գնացքը՝ տոկուն ու յաղթ:

* * *

Զանգը՝ մեր գիւղին սի'րտն էր: Խօսնա'կը՝ որուն «խօսք»ը կը հասնէր գիւղի բոլո'ր մարդոց: Կոչնակն էր ան, որ կը հանդիպէր ամեն մէկ գիւղացիին, ուր ալ ըլլար ան՝ դաշտին թէ այգիին մէջ կամ տան երդիքին տակ, դպրոցի շրջափակին թէ նեղիկ կրպակի մը մէջ, փողոցներու մէկ անկիւնը կամ տանիքներու վրայ: Երբ կը հնչէր՝ բոլորն իր ձայնին մէջ կը միացնէր, գիւղը իրմո'վ կը միագանգէր: Իր ղօղանջով գիւղը գի'ւղ կ'ըլլար: Գիւղացիք իրմո'վ իրար կը հանդիպէին, իր մէջէն գիրար կը գգային եւ իրենց համայնութիւնը իրմո'վ կ'ապրէին: Զանգը ժամացոյցն էր մեր գիւղին եւ իր ղօղանջը՝ ժամադրավայր մեր գիւղացիներուն:

* * *

Փոշի դարձողը միս ու ոսկորն է, իսկ մարդը միս ու ոսկոր ունեցող, բայց միս ու ոսկոր չեղող այն էակն է, որ ունի հոգեկան ապրումներ, գաղափարներ, ունի իտէալներ եւ մանաւանդ կեանքի մէջ ստեղծագործութեան եւ յառաջդիմութեան անյագ տենչ եւ անսանձ թոիչք: Եւ մեռելներն

են որ մեզի կը յիշեցնեն թէ իրենք կ'անցնին, իրենց անցնելիք միս ու ոսկորով, բայց կ'ապրի՛ն, որովհետեւ իրենց հաւատքը, գաղափարը, ստեղծագործութիւնը վեր կը մնան հողայնութեան օրէնքներէն:

* * *

Թաղէոս Առաքեալի նահատակութեան դրուագին մէջ հայ ժողովուրդը ըմբռնած է աստուածային, քրիստոսաւանդ այն ճշմարտութիւնը որ երջանկութեան կը վերածուի երբ մարդ կարենայ զայն խառնել իր գիտակցութեան եւ կամքին մէջ, թէ՛ «հոգի առաւել է քան զմարմին», թէ՛ ճշմարտութեան, բարիին, հաւատքին, սիրոյն, կեանքի ազնուագոյն ապրումներուն, ընտրելագոյն գաղափարներուն եւ գերագոյն գաղափարականներուն համար՝ կ'արժէ կեա՛նք տալ, արի՛ւն հեղուլ, որպէսզի ապրին Եկեղեցին ու Ազգը, Կրօնն ու Հայրենիքը, Գիրն ու Լեզուն, Մշակոյթն ու Արուեստը, առանց որոնց մարդիկ ու ազգեր պղինձ կ'արժեն պատմութեան գանձանակին մէջ, թեթեւ կը կշռեն պատմութեան կշիռի նժարին վրայ եւ ակընթարթային արագութեամբ կ'անցնին աշխարհի թատերաբեմին վրայէն:

* * *

Կաղնի՛ է հայոց ազգը: Դարաւոր կաղնի: Եւ անոնք որոնք ազգին պատկանելու իրաւ, գիտակից զգայարանքը ունին, դէպի ապագան նայիլ գիտեն, չեն կրնար կտրուիլ կաղնիի բունէն ու արմատներէն, որովհետեւ կ'աղքատանան ու կը տկարանան առանց մեր հայրերու ստեղծագործութեան հարուստ ենթահողին եւ անկէ ծնող աւիշին: Այսօր աշխարհի չորս ծագերուն վրայ բոլոր ազգեր, անոնց շարքին նաեւ մեր ժողովուրդը, որոնք հողի վրայ, երկրի երեսին հսկայական նուաճումներ կը կատարեն գիտական, նարտարարութատական եւ մշակութային մարզերուն մէջ, կը պեղեն նաեւ իրենց հայրենի հողը եւ հողի ընդերքներուն մէջ կը փնտռեն արմատները իրենց գոյութեան:

Հող, մարդ եւ գիր
Անթիլիաս 1983

Եթէ ազգանունդ Հայաստան բառին առաջին երեք տառերէն է շինուած, եթէ անուանդ վերջին երեք տառերը **եան** մասնիկով են կնքուած, պատկանելիութեան գաղափարին որպէս ցուցանիշ, եթէ արիւնդ մարմնիդ մէջ հայութեան մարմնի արիւնէն է կաթած, եթէ պատմական յիշողութիւնդ Հայաստանի եւ հայ ժողովուրդի պատմութեան տուեալներով է միայն ըմբռնելի, եթէ կենսագրութիւնդ առանց հայրերուդ կենսագրութեան անհասկնալի կը մնայ նոյնիսկ քեզ համար, հետեւաբար, ներկադ, այսօրուան կեանքդ ու գործդ չեն կրնար մնալ անբաժան այժմ եւս ապրող, մանաւանդ վերածնած, ազատօրէն հայացած, ինքնօրէն անկախացած Հայաստանէն եւ անոր կեանքը վարելու կոչուած ազգակերտութեան հրամայականին տակ գործող Հանրապետութենէն եւ ազգընտիր Պետութենէն:

Վասն Հայրենեաց
Անթիլիաս 1992

Էջմիածինը միշտ նոր է, եւ՝ նորոգող: Որովհետեւ Հոգին է որ քարերուն հետ է էացած հոգւոյն մէջէն անոր՝ որ քարերն այնտեղ հիսեց շաղախովը իր հաւատքին, լուռ ու մութ քարերուն տուաւ լուսախօս լեզու, «Աշխարհի Լոյս»ը իր աչքերուն տեսիլքովը խառնելով Արարատէն թագաւորին դիցազնեայ ուսերովը բերուած վէմերուն եւ Արարատեան դաշտէն թագութիին բեհեզեայ գոգնոցովը բերուած հողին եւ անով զանգուած շաղախին:

Միածինը մէկ անգամ ծնաւ ի Բեթղեհէմ եւ մէկ անգամ իջաւ ի Հայաստան աշխարհ: Բայց ամէն անգամ որ մէկը այցելէ ի Բեթղեհէմ եւ ի Ս. Էջմիածին, Միածինը վերստին կը ծնի ու կ'իջնէ անոր մէջ եթէ ան իր հոգին չէ բանտարկած ու կղպած իր մարմնին ու մարմնեղինութեան պարունակին մէջ, իր հոգեղէն զգայնութիւնը չէ ենթարկած աշխարհայինին հեղձուցիչ, ջլատիչ եւ այլասերիչ չարագործութեանը, որուն անունն է վատ հաղորդութիւն կամ պարզապէս՝ անհաղորդութիւն:

* * *

Տառապանքն ու չարչարանքը, նեղութիւնն ու անձկութիւնը, մղձաւանջն ու անդոհանքը վերջը չեն կեանքին, երբ այդ կեանքը իր մէջ վատ պահած ունի յաւիտենութեան կայծը, անմահական հոգիին անմահարար շունչը, ամենայաղթ Աստուծոյ պատկերին ջինջ պայծառութիւնը:

* * *

Ս. Գրիգոր Լուսաւորիչ իր հաւատքի աղբիւրէն կը քաղէր իր հոգեկան արիւթիւնը, իմացական պայծառատեսութիւնը եւ տեսլապաշտ ոգին: Կը հաւատար որ քրիստոնէական կրօնին մէջ կար ստեղծագործական վեհացուցիչ ոյժ մը, որով մարդը վեր կը բարձրանար հողեղինութենէ, կը ձերբազատուէր անցաւոր գոյութեան մը մարդկային գիտակցութեան պարտադրած ահաւոր անձկութենէն եւ ներքին մղում կը ստանար նիւթը նուաճելու եւ անով հոգեկան մնայուն արժէքներ կերտելու համար:

1700-ամեակը Նոր Հոգեգալուստ
Անթիլիաս 1994

Իրար սիրել՝ կը նշանակէ իրարու օգնել, իրարու զօրավիգ կանգնիլ, իրարու ծառայել:

Քրիստոս սիրեց մարդը եւ անոր համար մա՛րդ եղաւ: Ծառայեց մարդուն ի խնդիր անոր հոգեկան երջանկութեան, անոր փրկութեան:

* * *

Աշխատութիւնը այն է երկրին ու կեանքին համար ինչ որ է հոգին՝ մարմնին: Հանեցէ՛ք հոգին մարդուն՝ մա՛հ է այնտեղ: Հանեցէ՛ք աշխատութիւնը կեանքէն՝ մեռելութիւնն է այնտեղ....:

* * *

Աստուածածնի անձին պանծացումը մեր մէջ կը վերապրեցնէ մաքրամաքուր հոգեկան ապրումներու եւ առաքինութիւններու եւ մայրական կոչումի պատուականագոյն եւ հայաշէշտ գաղափարը, որուն այսօրուան աստիճանական գունաթափումը աղէտ է մեր ժողովուրդի ընտանեկան կեանքի սրբութեան եւ փրկարար ազգային դերին վրայ բերած իր մթացող ստուերով:

ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔԻ հայաւանդ սովորութիւնը մեր Հայաստան աշխարհը կը փոխադրէ մեր սրտերուն մէջ: Հայկական հողի ընտրելագոյն բերքին՝ ԽԱՂՈՂԻՆ եւ անոր կապուած աւանդութիւններուն հանդէպ Հայց. եկեղեցւոյ ցոյց տուած սիրոյ եւ յարգանքի այս արտայայտութիւնը, բերքին մէջէն **հո'ղը** օրհնուած պահելու իր դարաւանդ անխախտ պարտականութիւնն ու հաւատարմութիւնը պէտք է որ արժեւորուի՝ մեր ժողովուրդին գիտակցական առողջ մօտեցումով եւ գործնական ընդառաջումով եւ մասնակցութեամբ:

* * *

Եղի՛ր ու մնացի՛ր ուխտի ժողովուրդ:

Ուխտ՝ կը նշանակէ **հաւատարմութիւն** հանդէպ Աստուծոյ եւ հանդէպ ազգիդ: Ուխտ ընել գիտցող եւ ուխտը կատարել կրցող ժողովուրդը չի՛ մեռնիր: Ուխտ ընել գիտցող եւ ուխտը կատարել կրցող անհատը՝ Աստուծոյ եւ ազգի հաղորդութենէն աւիշ կը քաղէ եւ կը մնայ առողջ ու տոկուն, կանանչ ու պտղաբեր: Ուխտը կը բարձրացնէ մարդը դէպի Աստուած եւ կը շաղկապէ ազգին:

* * *

Ա՛լ դադրինք թափառաշրջիկութեան ջլատիշ հոգեբանութենէն, որ մեր պատմական կեանքի չարաղէտ ու քանդարար երեւոյթներէն մէկն է եղած արդէն: Ինչպէս թօթափեցինք գաղթականի հոգեբանութիւնը, շարունակեցինք գաղթականի ցուպը...: Անցեալի սխալը չկրկնենք: **Համախումբ ապրելուն մէջն է ազգի մը ոյժին աղբիւրը:** Որքան նօսրանանք այս աշխարհի չորս թելերուն վրայ մշուշի պէս տարածուելով՝ այնքան կը տկարանանք հովերէն տարուելով եւ ընդհանուրին մէջ մեր ինքնութիւնը կորսնցնելով:

* * *

Աւանդութիւնները ազգերու ինքնութեան շաղախիշ տարրերն են, որոնք երբ անտեսուին, մոռցուին, արհամարհուին՝ գունատութիւն եւ կերպախաթարում յառաջ կը բերեն այդ ազգերու դիմագծութեանց վրայ եւ, ի վերջոյ, դէպի նօսրացում եւ աղօտութիւն, թուլացում եւ անէացում կ'երթան անոնք:

Աւանդութիւնները խարիսխներ են ամրութեան եւ տոկունութեան: Հանցեք զանոնք ժողովուրդներու կեանքէն. ազգերը կը տատանին անարմատ եղէգներու պէս եւ կը թափին ճիւղերէն փրթած տերեւներու նման:

Ծանիր գրեզ
Անթիլիան 1983

Ինչ կ'ուզեք ըրեք, մեր հողը «ղայի'մ» բռնեցեք, ամո'ւր կառչած մնացեք այս սուրբ հողին: Հողէն ծնած ենք: Հողն է Աստուծոյ մեծագոյն պարգեւը մարդուն: Աստուած մարդը երկինքի կապոյտէն չստեղծեց. Աստուած մարդը ջուրէն չստեղծեց. Աստուած մարդը հողէ'ն ստեղծեց: Հո'ղն է մարդուն համար կեանքի աղբիւրը: Եկէ՛ք, հետեւաբար, մեր հայրենի հողը լքելու փորձութենէն հրաժարինք: Թող Լեւինականի աղէտը ամէն մէկուս համար ուխտի պահ մը դառնայ, ուխտի՝ որ մենք պիտի չթողնենք այս հայրենիքը, պիտի չերթանք օտար աշխարհներ: Մեր թշնամին մեզի ստիպեց որ մենք Սփիւռք դառնանք. դուք ձեր կամքով սփիւռք մի՛ դառնաք: Սփիւռքը մահուան նախադրումն է, առանց հայրենիքի:

1988 թ. դեկտեմբեր

Քրիստոնէական համատարած տիեզերական ծառի բնից առաքելական ծագմամբ ուղղակիօրէն շառաւիղուող, Հայաստան աշխարհի տարածքի վրայ եւ Հայ ժողովրդի կեանքի մէջ իր հովանին սփռող, եւ իր աւիշը ներարկող սաղարթալից ու պտղալից մի ճիւղ է Հայոց եկեղեցին:

Մի ճիւղ՝ որ իր հովանիով, դարերի ընթացքում, զովութիւն եւ զուարթութիւն, թարմութիւն եւ աշխուժութիւն է ներշնչել իր ներքեւ մակաղած հօտին, ապահովութիւն՝ ընդդէմ այրող արեւների, ցուրտ փոթորիկների ու հեղձուցիչ խորշակների:

Մի ճիւղ՝ որ իր հարուստ պտղաբերութեամբ հայ ժողովրդի հոգիին— եւ մերթ մարմնոյն—սնունդ է հայթայթել, նրա կեանքը յանախ փրկելով մահից, մահուամբ մահը խորտակելու քրիստոնէական հրաշագործ զօրութեամբ, եւ նրա գոյութիւնը երկարելով, ստեղծագործութեան ճանապարհով, դէպի յաւերժութիւն:

* * *

Հայ ժողովրդի համար հոգեւոր ճշմարտութիւնների, բարոյական սկզբունքների, ազգային առողջ գիտակցութեան ներշնչական-վառարան եղող «**հոգեւոր հայրենիք**»ը Հայաստանեայց եկեղեցին է. բազում անգամ ասուած, բազում անգամ ասելի:

* * *

Քրիստոնէութիւնը **աղ** եղաւ մեր ժողովրդի հոգեկան կեանքի համար: Եւ Հայաստանեայց եկեղեցին հանդիսացաւ **աղամանը**, որտեղից նա ստացաւ իր համեմիչ հիւթը՝ դրանով իր կեանքն անելու համար աւելի իմաստալի եւ ուրախալի, մանաւանդ երբ տրտմութեան եւ վիշտի սլաքը սուր խոցում էր սիրտը հային, եւ վհատութեան ամպը փորձում էր թանձրօրէն նստել նրա հոգու մէջ...:

* * *

Բնութեան օրէնքը չի թոյլատրի ռեւէ դատարկութիւն: Դատարկութիւն գոյութիւն չունի Աստծու ստեղծագործութեան մէջ: Երբ ռեւէ պատճառով դատարկութիւն է ստեղծում, այն անմիջապէս լցում է մի բանով ու մի ձեւով: Մարդկային կեանքում եւս դատարկութիւնը տեղ չունի: Երբ պա-

րապության ստեղծուի այս կամ այն պատճառով, եթե մենք չիմանանք եւ չճգնենք այն լցնելու մեր անհատական անձի եւ մեր սեպհական ազգի բարիք բերող տարրերով ու տուեալներով, ուրիշներ կու գան իրենց ուզած ձեով ու չափով այն լցնելու:

Հայաստանէայց Եկեղեցին իր «Ծառայական Կերպ»ին մէջ

Անթիլիաս 1994

Այն մարդը եւ այն ազգը որ կը կտրուին գիրքի աշխարհէն՝ չոր անապատ ու տափաստան կը դառնան, ուր միայն փուշն ու տատասկը, օձն ու կարիճը տուն կը գտնեն...: Գիրքի աշխարհին մէջ ապրող մարդն ու ազգը իրենց կեանքը ածուի կը վերածեն, ուր կենդանութիւնը կանաչավառ կերպարանք կը զգենու ու պտղատատ բեղմնաւորութեամբ կ'իմաստաւորուի եւ հրճուալից կենսաբովանդակութեամբ կը գեղեցկանայ:

* * *

Զմոռնանք. հայ ժողովուրդին կեանքին մէջ գիրքը ծնած է Սո'ւրբ Գիրքով, Աստուածաշունչ մատենանով: Հայ Գիրքը ստացուած է երկինքէն եւ կամ երկնուած է երկնայնացած միտքին մէջ հայոց երկրէն ծնած եւ երկիրը երկինքին կամարակապած մարդու մը տեսիլքին մէջ: Եթէ Եբրայեցի ժողովուրդը իր Օրէնքը երկինքէն առաւ՝ Սինայի բարձունքէն զայն պոկելով, հայ ժողովուրդը իր Գիրքը երկինքէն ստացաւ՝ Ս. Մեսրոպի աշքերէն զայն քաղելով...:

* * *

Աղբիւրէն խմուած ջուրին զովութեան, արեւէն շառաւիղած ճառագայթին ջերմութեան, ծառէն քաղուած թարմ պտուղին համին պէս բան մը կը պակսի անոր՝ որ իր աշքերը փակ կը պահէ հայ գիրքին հանդէպ, երբ իր ներքին իմացողութիւնը իր սնունդը չ'ըմպեր հայ-արմատ ծառին ու հայագիր Լ'ատեանին ակունքէն:

* * *

Հայ Գիրքը, այդ մշակոյթին ամենագօր կորիզը, եղաւ հայ մարդուն ընկերը ամէն տեղ եւ ամէն ժամանակ: Հո'ն ուր հայութիւնը օտար աշխարհներէ եկող օտարացնող ազդեցութիւններու տակ տժգունէցաւ եւ աղօտեցաւ՝ Հայ Գիրքը դարձաւ գոյն եւ լոյս: Հո'ն ուր հայութեան շունչը շիջելու սատինան տկարացաւ ու բարակցաւ՝ Հայ Գիրքը փչեց «շունչ կենդանի» եւ դարձաւ ձայն պայծառաշէշտ: Հո'ն ուր հայութիւնը խոտորեցաւ ներքին անհաւատարմութեան, ուժացումի փորձութենէն այցելուած՝ Հայ Գիրքը դարձաւ շեփորաձայն յուշարար եւ խիղճի զարթնումի եւ ուղղումի մշտահունչ դօղանջ:

Հայ մարդը՝ հայ գիրքին դիմաց

Անթիլիաս 1990

* * *

Հոգեորականությունը կը նշանակէ խաչելություն. ան որ խաչը շալկելու քաջությունը չունի չի՝ կրնար Քրիստոսի աշակերտ եւ նահատակներու շառաւիղը ըլլալ:

* * *

Կ'աղաչեմ ձեզ, կրակէն անցած եւ մաքրափայլօրէն ոսկիացեալ հոգիներով յստակատես նահատակներ, շա՛նթ թափեցէք մեր գլուխներուն եթէ թու՛նանք մեր միութեան ամենազօր եւ ամենայաղթ հանգոյցներէն. ձեր աստուածացոյք ցասումը կայծակեցէ՛ք մեր գլուխներուն երբ անտարբերութեան եւ հոգելքումի կամ սրտաթափումի թմբիրը այցելէ մեզի այս **օտար ամալի ճամբէքի վրայ**: Եղէք մեր խիղճը, մեր միութեան յարաբարբառ յուշարարը, հայութեան ջինջ հայելին, որուն յստակությունը, հարազատությունը, մաքրությունը արեամբ զոհողութեան փայլովն է շահուած: Ձեր նայուածքը մի՛ հեռացնէք մեզմէ. ձեր այդ նայուածքին մէջ մենք ունինք սլաքը մեր ուղղութեան եւ խթանը մեր արթնութեան, գաղտնիքը մեր յաղթութեան:

* * *

Փա՛նք քեզ, Հոգի Աստուծոյ, որ ահա կը շրջիս հայութեան կոտորակուած մարմնին վրայ աշխարհի չորս կողմերը եւ յարութեան շունչով նոր կեանք կու տաս մեր հին բայց հիննալ չգիտցող հայ ազգին՝ հայրենի հողին թէ արտերկրի վրայ: Հոգեկան հրաշակերպութեան աղբիւր եւ դուն, որ **ձկնորսները առաքեալի կը վերածես, հովիւներէն մարգարէներ** դուրս կը բերես: Իմաստութեան, արիութեան հոգին ապրեցուր հոգիներուն մէջ մեր նոր զաւակներուն, որպէսզի կարենան հասնիլ այն ապագային, որ մեր ազգի երազն է, մեր պատմութեան ժառանգն է, մեր նահատակներու կտակն է, մեր ցեղի իրաւունքն է եւ աստուածային արդարութեան ու աստուածապարգեւ ազատութեան տուրքն է տառապակոծ, խաչապաշտ ու խաչաշարշար ժողովուրդիդ:

* * *

Սէրն է ստեղծարար, ատելությունն է քանդարար:

* * *

Հայեր կը մեռնին, բայց հայությունը չի՛ մեռնիր....:

* * *

Հաւատքը չէ՛ր արդեօք, որ անապատի աւազներուն վրայ շարժեց հայ մօր ձեռքը, եւ աւազին վրայ այդ ձեռքի չորցած մատներուն գրել տուաւ Ա.Բ.Գ.-ը: Հայ մայրը գիտէր որ աւազը հովին հետ պիտի երթայ բայց հաստատօրէն կը հաւատար, որ իր վերապրող զաւկի աչքերուն մէջ Ա.Բ.Գ.-ի տեսարանը յաւետ պիտի մնար:

* * *

Ողջ մեռնիլը ատլի դառն է, ատլի սոսկալի է քան իրական մահը: Տէր Զօրի նահատակները մեռած ողջեր են. մենք չդառնանք ողջ մեռելներ կեանքին մէջ:

Գիտակցինք, նորոգուինք, հաւատքով թրծուինք, սպունգ դառնանք հաւատքին, սպո՛ւնգ: Մէկը եթէ մեզ բռնէ ու քամէ՝ հաւատք եւ սէր միայն դուրս գան մեր սպունգացեալ անձերէն:

Անցեալը անցած չէ

Անթիլիաս 1986

* * *

«Մարդ է որ գործէ գերկիր»: Եկեղեցին իբրեւ շէնք, իբրեւ ծէս, իբրեւ ձեւական աւանդութիւն չէ որ պիտի իրագործէ իր փրկարար դերը, այլ՝ որպէս երկրի վրայ ապրող եւ գործող հաւաքականութիւն մը, միութիւն մը եւ մասնատրապէս **եկեղեցականութիւն** մը Աստուծոյ շունչին տրոփը իր սրտի զարկերուն մէջ եւ ազգին սէրը իր արեան տարրերուն մէջ: Եկեղեցին, այս իմաստով, ժողովուրդը պատրաստելու համար ինք պէտք ունի պատրաստութեան: Անձնական պատրաստութենէ զուրկ եկեղեցականութիւն մը չի կրնար հանրային ծառայութեան զինուորեալներու յատուկ դերը կատարել արդիւնալից կենսունակութեամբ եւ ստեղծագործականութեամբ: Փարատութեային է մտածել որ իր անձը չկազմաւորած մարդը կամ մարդերու խումբը կրնայ ժողովուրդ մը կազմաւորել: Քրիստոս, Մեծ Վարդապետը, Տիպար Ոսուցիչը երեք տարի գործելու համար երեսուն տարի պատրաստուեցաւ....:

* * *

«Թարգմանիչ» համեստ անուան տակ թագնուած այն մեծ հոգեւորականները, որոնք տարիներ ամբողջ իրենց Վարդապետին կենսատնով «ոչ ի քուն երազ եւ ոչ յարթութեան տեսիլ», իրենց մտաւորական աշխարհը լեցուցին Բիզանդիոնի, Աթէնքի, Եդեսիոյ, Աղեքսանդրիոյ նման իմացական կեդրոններէ քաղուած նիւթերով եւ Հայաստանի մէջ ճրագի նման վառեցան, իւղի վերածելով քաղուած նիւթերը եւ իբրեւ լոյս սըփռելով Հայաստան աշխարհի մինչեւ մութ, լքուած անկիւնները..., Ոսկեդարի՛ վերածելու համար մեր պատմութեան Ե. դարը:

Եւ գիտենք որ դարերը չկրցան նուաճել անոնց անունները հայ ժողովուրդի յիշողութեան մէջ եւ անոնց հանդէպ երախտագիտութեան եւ հաւատարմութեան զգացումը եղաւ հիմնական պայմաններէն մէկը մեր գոյութեան: Որովհետեւ անոնց մէջ կը կրկնուէր ատեարանեան պատկերը **աշակերտութեան** եւ **առաքելութեան**: Որովհետեւ կրցան ըլլալ այնպէս ու այնքան **աշակերտ** ինչպէս եւ որքան **առաքեալ** էին, եւ ըլլալ այնքան ու այնպէս **առաքեալ**, որքան եւ ինչպէս **աշակերտ** էին....: Միշտ հաւատարիմ Վարդապետին եւ նախանձախնդիր անոր վարդապետութեան ցանքին:

— Հալիլ՝ լոյս տալու համար....:

Ահա թէ ինչո՛ւ մոմին պատկերը եկեղեցոյ մէջ՝ սրտառուչ պատկեր մըն է հայ մարդուն համար....:

Լոյս տալը՝ մեր գոյութեան վախճանն է: Լոյս առնելը՝ մեր գոյութեան պատճառը: Իրարմով կան անոնք: Առանց մէկուն կամ միւսին՝ անիմաստ է այս կամ այն: Մին առաքելութիւնն է: Գազաթը լերան, ուր մեր մահը կայ: Բայց... միւս լանջին, մեր լոյսէն՝ կեանքը ուրիշներուն: Մովսէս տեսաւ Քանանու երկիրը: Ու մեռա՛ւ: Առաքելութիւնը աւարտած էր: Լերան գազաթը՝ մեր **առաքելութիւնը**: Իսկ բարձունքի լանջին մեր բարձրացումը սա տագնապով, տքնութեամբ—անհամա՛ր գիրքեր, տետրակներ, բառեր, ժամեր, ձախողութիւններ, վերականգնումներ—իրագործող՝ մեր աշակերտութիւնը:

Կրնա՞նք հասնիլ գազաթին: Աշակերտ ենք ուրեմն: Կրնա՞նք մեռնիլ գազաթին վրայ: Առաքեալ ենք, հետեւաբար:

Մեր Հայրերու յիշատակը այնքան յանախած է մեզ մեր կեանքի ընթացքին, որ մեզ դարձուցած է անցեալին երկրպագուները, պատմութեան բարեպաշտները, եւ մենք նուիրականութեան սրբազան շղարշով ենք պատած ամէն ինչ որ կու գայ անցեալէն: Եւ երբեմն հասած ենք այն աստիճանին, ուր նոր ստեղծագործութեան հրաշքը այնքան է տկարացած մեր սերունդներուն մէջ՝ որ անցեալի ոգեկոչումով, անցեալի արժէքներու վերարժեւորումով, անցեալի սիրագործութիւններու յիշատակով միայն կը գոհանան անոնք: Եւ սակայն, Վերածնութեան Սերունդի մը յատկանիշը չի կրնար ըլլալ այս: Նոր կեանքի մը բաբախումներով նոր արեան թարմութիւնը իր երակներուն մէջ զգացող հայ երիտասարդ սերունդը պէտք է հայի դէպի **գալիքը**: Ամէն սերունդ **ի՛ր** պարտքը պէտք է կատարէ, **ի՛ր** լուման պէտք է նետէ Հայութեան յաւերժակառոյց գանձանակին մէջ:

* * *

Հայ հոգեւորականութեան նոր սերունդը ոգիով եւ բունն նախանձախընդրութեամբ հաւատարիմ՝ նոյն եւ մէկ ու անփոփոխելի Հայց. Եկեղեցոյ Հիմնակառոյցին, առանձնաշատուկ դիմագծութեան՝ պիտի կարենայ քայլ պահել Ի. դարու եկեղեցական եւ քաղաքակրթական ընդհանուր կեանքի գնացքին հետ եւ բերէ **իր սեպհական** ծառայութիւնը, **իր անհատական** դրոշմով: Այս է պատմութեան իրաւ հասկացողութիւնը: Կրկնութիւնը մարդկային կեանքի բնական ձեւը չէ: Մարդկային կեանքը **ռիթմ** ունի, շարժում՝ հարթութենէ դէպի բարձրութիւն, բարձրութենէ դէպի գազաթ... Մեր եկեղեցին ժողովուրդին չի կրնար ծառայել եթէ ծառայութեան նոր ձեւեր չըզտնէ նոր դարուն մէջ ապրող հայ մարդուն սպասաւորելու համար:

* * *

Հայ հոգեւորականը աշխարհի որ անկիւնին մէջ ալ որ նետուած ըլլայ այսօր, ի՛նչ պայմաններու տակ ալ որ ծառայէ, պէտք չէ ձեւագեղծէ հոգեւորականի այս կերպարը որ մշտատիպար, քրիստոսապատկեր եւ հայաձեւ կերպարն է հոգեւորականութեան, աստուածային քահանայութեան՝ ի սպասաւորութիւն Թորգոմայ Տան աշխարհացրի զաւակներուն:

Հայ հոգեւորական սերունդին համար Հայ ժողովուրդին ծառայել Ի. դարուն, կը նշանակէ այնպիսի հոգեւոր, ազգային եւ մշակութային նուանումներով զօրացնել Հայց. Եկեղեցին, որ ան կարենայ դառնալ աղբիւր

մը, ուրկէ հայ ժողովուրդը իր հոգիի եւ ազգային ապրումներու առօրեայ ծարարը կարենայ գոհացնել, եւ ոչ աւագան մը՝ անցեալէն եկող ջուրով միայն լեցուն...:

Հայ եկեղեցոյ Վերածնութեան Սերունդին միայն կը մնայ գտնել գաղտնիքը ժայռերէն ջուր բխեցնելու հրաշքին, հայութեան կեանքին մէջ, եւ աղբիւրներու յորդահոս մատոռակումով ինքզինք արժեւորելու որպէս ծառայ Աստուծոյ եւ սպասաւոր պանծալի ու պաշտելի եւ անխորտակելի Հայ ժողովուրդին:

* * *

Դա՛րձ դէպի մեր արմատները. դա՛րձ դէպի մեր ինքնութիւնը, դա՛րձ դէպի մեր արժանապատուութիւնը, դա՛րձ դէպի մեր արժէքները, որոնք խորթ չեն, հարազատ են, մարդկային քաղաքակրթութեան անկորնչելի արժէքներուն. բայց մե՛րն են, մեր արիւնին խառնուած, մեր հայրերու հոգիով կեանք առած, մեր նախնեաց անուններով մկրտուած: Դա՛րձ դէպի ինքնաճանաչում, ինքնախորացում, ինքնալինելութիւն: Այդ դարձով մենք անելի մօտ կ'ըլլանք Աստուծոյ եւ մարդկութեան բարձրօրէն բարացուցիչ եւ բնորոշիչ ստեղծագործական, քաղաքակրթական ոլորտներուն:

* * *

Սիրելիներ՛ր, երբ աշխարհը այսօր «պանքա»-ներով կը շատնայ դուր «վանք»-ով անեցէք...: Այս աշխարհը վանքին սովը պիտի ունենայ ու պանքի առատութենէն պիտի տառապի ու՝ արդէն իսկ կը տառապի: Ոչ մէկ ազգ շռայլութեան մէջ, յրդիութեան մէջ, առատութեան մէջ կրցած է տոկալ. ազգերու անկումը սկսած է երբ մարդիկ յղիացած են նիւթով. վկայ՝ Հոռմը ինկաւ երբ Հոռմէացին յղիացաւ:

Այսօր, վանքը օրհնութիւն մըն է մեր ժողովուրդին համար. գիտնանք այդ վանքին մթնոլորտը ապրիլ ու արժեցնել: Կը հաւատամ, որ վաղը անելի պիտի գնահատուի. որովհետեւ վաղը վանքը անելի պիտի արժէ քան պանքը: «Զարգացող», «յառաջացող», «հարստացող», «նոխացող», «յրդիացող» գնացքն այս աշխարհի արդի կեանքին՝ անելի եւս պիտի զգացնէ մարդուն հոգեկանին սովը եւ «հարստութեան» մէջ մարդկային աղքատացման երեւոյթը: Վաղը «ոգեղէն հաց»ի կարօտութենէն անելի պիտի տառապի մարդը «նիւթեղէն հաց»ի առատութեան իր վիճակին մէջ:

Երուսաղէմի Տաճարը կեդրոնը չէր միայն Եբրայական պաշտամունքին եւ կրօնական կեանքի արտայայտութեան ուրիշ վիճակներու եւ երեսներու, այլ՝ միանգամայն շտեմարանը Եբրայեցոց՝ իբրեւ կրօնական հաւաքականութեան, նիւթեղէն հարստութեան: Բոլոր անոնց, որոնց համար Ս. Գրոց պատմութիւնը օտար կամ խորթ կալուած մը չէ ծանօթութեան՝ պարզ իրականութիւն է որ ամէն Եբրայեցի իր կարողութեան չափով իր նուիրաբերութեան բաժինը ունէր Տաճարին նոխութեան եւ կեանքին ու գործին մէջ: Ամէն անգամ երբ բարեպաշտ Եբրայեցին ներս մտնէր իր Աստուծոյն Տունէն, իր սրտէն բխած նուէրը կը նետէր տասնեւերեք փողանման գանձանակներէն մէկուն մէջ: Սովորական ու գովելի արարք: Ոչինչով սակայն մասնաւորապէս յատկանշական: Այնպէս ինչպէս մեզի

համար եւս ոչինչ ունի իր մէջ ուշագրաւ հայ հաւատացեալի մը նուէրին զետեղումը բանկալի կամ իր առջեւէն անցնող պնակին մէջ եւ կամ մոմի մը գնումն ու վառումը:

Բայց սովորական այս պատկերին մէջ կար մէկ յատկանշական անկիւն.—Յիսուս գանձանակին դիմաց, քիչ մը հեռուն, լուռ ու հանդարտ կանգնած՝ կը դիտէր...: Աչքերը սեւեռուած էին ժողովուրդի անվերջ շարանին վրայ, ուրկէ մարդիկ մէկ-մէկ կը քակուէին ու իրենց տուրքը կը ձգէին գանձանակին մէջ: Կը դիտէր թէ ինչպէ՛ս ժողովուրդը իր նուէրը կ'ընծայէր Աստուծոյ: «Տեսանէր թէ զիա՛րդ ժողովուրդն արկանէր պղինձի գանձանակն»: Կը դիտէր բոլորը անխտիր. ու կը մնար ինք՝ աննշմար: **Տուրքին** վրայ չէր սեւեռուած իր ակնարկը այնքան՝ որքան տուողին: Իրեն համար տուրքին նիւթեղէն չափն ու արժէքը չէին մտածման առարկան: Կը դիտէր **մարդը** տեսնելու համար այն ոգին, որով մարդիկ կը շարժէին իրենց ձեռքերը տալու՝ **ժեսդ**-ին մէջ:

Դժուար չէ, եւ ոչ ալ սխալ պիտի ըլլար, երեսակայել հպարտ, արհամարհոտ կեցումաձքը այն մեծահարուստ անձերուն, որոնք երբ իրենց ծանր կշռող դրամները կը նետէին գանձանակին մէջ կը սպասէին լսել անոնց ձայնը եւ ունկնդրել արձագանքին...: Աւետարանին խօսքը իրենց մասին՝ որքան պարզ այնքան եւ թելադրիչ է. «**Բազում մեծատունք արկին բազում ինչ**»: Այս բոլորին դիմաց Յիսուս մնաց անվրդով: Ծանօթ էր իրեն տիպարը այդ մարդերուն, որոնց երբեք չհանդիպեցաւ իր համակրութիւնը:

Սովորական տեսարանին մէջ յանկարծ նոր ու անսովոր գիծ մը դրոշմուեցաւ: Յիսուսի աչքին նայումաձքը սլաքուեցաւ անոր ու կարծէք նոր փայլ մը շող արձակեց այդ ամենատես, հեռահայեաց, խորագնին եւ յայտնաբերիչ հայեացքին մէջ:

Ահա յանկարծ այրի կին մը մօտեցաւ ու շատ հաւանաբար վախով, ամօթի զգացումով ու թերեւս գաղտնի նետեց նաքարակիտ մը՝ երկու լումայ արժող: Բոլորը անտեսեցին անշուշտ խեղճ կինը: Ի վերջոյ, ի՞նչ կ'արժէր ինք. եւ ի՞նչ պիտի արժէր իր նուէրը: Յիսուս էր միայն, որ իր թափանցող հոգեկան հայեացքով կրցաւ չափել խորքը նուէրին՝ կնոջ հոգիին մէջ, ու զգալ բարոյական գեղեցկութիւնը արարքին: Անմիջապէս իր մօտ կանչեց իր առաքեալները ու անոնց բացատրեց արարքին իմաստը.—Այս տառապած կինը,—ըսաւ իր աշակերտներուն,—շատ **աւելի** նետեց գանձանակին մէջ քան բոլոր անոնք՝ որոնք դրամ ձգեցին հոն: **Աւելին**՝ տրուածին քանակին մէջ չէ, այլ այն ոգիին, հոգեկան տրամադրութեան, որով տրուածը տրուեցաւ: Մեծահարուստները իրենց ունեցածներու աւելորդներէն տուին. իսկ սա, իր չքաւորութեամբն հանդերձ, ինչ որ ունէր՝ տուաւ, մինչեւ իսկ իր կեանքը պայմանաւորող նաքարակիտը: Մէկ խօսքով՝ տուաւ իր Աստուծոյն, առանց հաշիւի, սահմանափակումի, կողմնակի դիտումներու: Տուաւ այնպէս ինչպէս իր սիրտը շարժեց իր ձեռքերը. տուաւ այնքան որքան էր իր ամբողջ ունեցածը: Ու երբ տուաւ՝ ալ չմտածեց ուրիշ հաշիւներու մասին. ալ չմնաց իր մօտ նուագագոյն մասնիկ մ'իսկ իր ունեցածէն:

Ահա՛ տալու այն ձեւը եւ տրուածը արժեցնող այն ոգին, որոնք հըրճուեցուցին սիրտը Երկնաւոր Վարդապետին ու պատճառեցին իր գովեստի խօսքը տառապած ու արհամարհուած այրիին մասին:

Գանձանակը, հոգոյ տեսութեամբ դիտուած, մարդկային պատմութիւնն է՝ Աստուծոյ ձեռքին մէջ: Անոր առջեւէն անցեր են ու կ'անցնին միշտ ան-

համար մարդեր ու բազում ժողովուրդներ անվերջ դարերու սահմանքին հետ միասին:

Հայ ժողովուրդն ալ, հարիւրաւոր ալ ազգերու շարքին, անցաւ այդ Գանձանակին առջեւէն եւ անոր կեանքը դարերու տարածքին վրայ երկնող սերունդները մէկ առ մէկ իրենց տուրքը դրին Գանձանակին մէջ:

Լուսաւորիչ՝ մեր հաւատոյ Հայրը, հոն դրաւ իր արցունքը՝ որպէս ձեռնապառ, եւ անշէջ պահեց Արագածի կատարի կանթեղին խորախորհուրդ լոյսը:

Ուրիշ սերունդի մը ռահվիրան՝ Ս. Մեսրոպ Մաշտոց, Հայ Գիրը դրաւ հոն տասնաբանեայ պատուիրաններու նման զայն քանդակելէ ետք հայու հոգիին մէջ:

Ղեւոնդ Երէց, իր թերեւս կոտրած խաչը գետեղեց հոն զոհողութեան գաղափարին իբրեւ վկայութիւն եւ ներշնչող աղբիւր: Իրմէ անբաժան Վարդանը Կարմիր՝ անպայման խաչին կողքին դրաւ իր արիւնոտած սուրը ի սէր Հայ Հաւատքին ու Հայրենիքին:

Խորենացին մեր ժողովուրդը իր ազգային գիտակցութեան բարձրացնող ու անոր մեծութեան ոգին արթուն պահող իր մատեանը դրաւ հոն անցեալի որպէս փառքի կոթող:

Աղօթաւոր հայ ճգնաւորներ անցան նոյն Գանձանակին առջեւէն ու աղօթքի խորհրդասքօղ մրմունջներ կաթեցուցին հոն: Նարեկացին անոնցմէ՝ իր միասնիկ հոգիէն մասնիկ մը դրաւ հոն իբրեւ անկորնչելի գանձ:

Հայ բիրաւոր նահատակներ քալեցին Գանձանակին առջեւէն ու իրենց կեանքէն մէկ-մէկ բջիջ, իրենց արիւնէն մէկ-մէկ կաթիլ ծորեցին հոն:

Անցան երաժիշտներ՝ Շնորհալիի քաղցր մեղեդիներուն զօրութեամբ հոգեգրաւ ու սրտայոյզ ձայնեղէն ալիքներ ու շեշտեր արձակելով իրենց հոգիներէն Գանձանակին անպարագիծ տարածութեան մէջ: Ծարտարապետներ՝ որոնք բերին հոն յաւերժականգուն ու վերասլաց կաթողիկէներու աստուածամերձ դրացնութիւնը երկնքին հետ: Քանդակագործներ՝ որոնք մահուան վրայ կեանքին յաղթանակը երգող գեղազարդ խաչքարերու անտառներ ամբողջ ընծայ բերին անոր: Ու գրիչներ եւ ծաղկողներ գեղագիր ու գեղակազմ ձեռագիրներու, եւ նրբագիծ ու գունագեղ մանրանկարներու ճոխ մատենադարաններ դասաւորեցին անկիւնի մը մէջ այդ անպարագիծ Գանձանակին:

Ահա, այսպէս, հազար ու մէկ հայ սերունդներ անցան Գանձանակին առջեւէն եւ հազար ու մէկ տեսակ նուէրներ դրին հոն: Բայց բոլորի տուրքին մէջ՝ հակառակ տեսակի այս ակնյայտ այլազանութեան՝ կար բան մը որ հասարակաց էր բոլորին — անոնք տուին այն ինչ որ ունէին՝ իրենց ամբողջ կեանքը, նման այրի կնոջ, առանց հաշիւի, սակարկութեան, ալ տարուած՝ Գանձանակին տիրոջ հանդէպ իրենց ունեցած սիրոյն ու նուիրումի զօրութենէն եւ, ապա, քրիստոնէական կրօնի հաւատքին եւ հայ ցեղի առաքինութիւններուն անդիմադրելի ոյժին մղումովը:

* * *

Հետքերը Քրիստոսի, ինչպէս կ'ըսէ Զեռնադրութեան Մաշտոցը շարադրող Հայ Վարդապետը, վիշտն է, տառապանքն է, նախատինքն է, չարչարանքն է, քաղցն է, աղքատութիւնն է: Այս բոլորով ի՞նչ ըսել կ'ուզէ.

անօթի՝ մնալ, ծարա՛ւ մնալ, անպայման դիտմամբ չարչարուի՛լ: Ո՛չ երբեք: Այս բոլոր բառերը խորհրդանշական իմաստ մը ունին եւ բոլորը մեր մշտ-
քերը կը տանին եւ կը սեւեռեն նոյն եւ մէկ կէտին—մոռնալ այն ինչ որ
անձին կը պատկանի, բոլոր այն ինչ որ միայն անձին շահն է, եւ երթալ
ծառայել անոնց, որոնք Աստուծոյ անունով մեզի յանձնուած են: Աստու-
ծոյ անունով բաժնել մարդոց վիշտը, հասնիլ մարդոց կարիքներուն, տա-
ռապանքներուն, տառապիլ անոնց տառապանքովը. ա՛յս է գերագոյն եր-
ջանկութիւնը: Քահանայութիւնը, Աստուծոյ նուիրումովը, ուրիշ բան չէ եթէ
ոչ ինքնամոռացութիւն, իբրեւ անհատ, այսինչ այսինչեան մարդ, եւ ինքն-
ընծայում Աստուծոյ եւ Իր ժողովուրդին: Իսկ հայ քահանայութեան պա-
րագային, դեռ ատելին՝ ծառայութիւն հայոց ազգին, հայոց մշակոյթին, զա-
նոնք նկատելով իբրեւ գերագոյն սրբութիւն, բարձրագոյն արժէք եւ անձը
անոնց ծառայութեան մէջ միայն ըմբռնելով իբրեւ արժէքաւոր գոյութիւն:

Խորհէ և մտիք
Անթիլիաս 1984

